«ԹՈՂ ՏՈՒԿՔ ՄԱՆՐ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆԾԻ ԳԱՆ։» ՂՈՒԿ. ԺԸ. 16։

ՀԱՏՈՐ ԺԷ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1888 ԹԻՒ 7

ՓԻՆԻԿԵՑԻ ՆԱԻ ՄԸ

ՓԻՆԻԿԵՑԻ ՆԱԻ ՄԸ

Եթէ զննենք կոստանդնուպոլսոյ առջև և կամ Սև ծովու կամ Միջերկրական ծովու որ և իցէ գլխաւոր նաւահանգիստներուն մէջ խարիսխ նետող նաւերը, պիտի հասկնանք դրօշակներէն թէ անոնք կը վերաբերին զանազան ազգայ որոյ իւրաքանչիւրը կը ջանայ բաժին մը հանել իրեն՝ աշխարհիս վաճառականութենէն։ Ասկէ 3,000 տարիներ առաջ, նաւեր կ'այցելէին այս նոյն նաւահանգիստները, բայց չէին նման այս օրուան մեծ նաւերուն, և ոչ կը վերաբերէին որ և իցէ այն ազգայ որոյ դրօշակները կը տեսնենք հիմա։ կը կարծուի թէ այն նաւերն էին պատկերին մէջ տեսնուածներուն նման, թիերով շարժող, բայց առագաստ ալ կը պարզէին երբ հովը նպաստաւոր ըլլար։ կը վերաբերէին փիւնիկեցւոց որոց քաղաքները, Տիւրոս և Սիդոն, աշխարհիս ամենէն հարուստ քաղաքներն էին։ Բայց ի Աստուածաշնչէն չունինք ուրիշ դիրք որուն պատմութիւնը հասնի մինչև անոնց փառաւորագոյն օրերը, բայց գիտենք որ անոնք կը բերէին մեծաքաշ և գոհարեղէնները Հինաստանէ, համեմներ՝ Հնդկաստանէ, արծաթ՝ Սպանիայէ, վշտակր և գերիներ՝ Ափրիկէէ, և, ինչպէս կը կարծուի, անգամ՝ Մեծն Բրիտանիայէ։ Գիտենք որ Քիրամ, Տիւրոսի թագաւորը, բարեկամ էր Սողոմոնի, և անոր նաւերովը բերուեցաւ Սողոմոնի հարստութիւնը։ Նաև փիւնիկեցի նաւո՛վ հաւանականապէս Յովնան փորձեց փախչել Տէրոջէ հրամանը կատարելէ, երբ ծովը նետուեցաւ ճամբուն վրայ։

Փիւնիկեցւոց քաղաքներուն կործանումը պատիժ էր անոնց մեղաց, և զայն մարգարէացած էին Եսայի և Եզեկիէլ։ Տիւրոս կրկին և կրկին նուաճուեցաւ երկար պաշարումներ կրելէ ետքը, և երբ Մեծն Ալեքսանդր առաւ զայն եօթն ամիս պաշարելէ յետոյ, սպաննեց անոր բնակիչներէն մէկ մասը և ծախեց մնացածները իբրև գերի։ Տիւրոս թէպէտ նորէն շինուեցաւ, սակայն բնաւ վերստին ձեռք չբերաւ իր նախկին կարևոր առեւճանը։

Փիւնիկեցի նաւաչէնք, թերևս այնչափ յարգ ունէին որչափ ունին այս մեր օրերուն մէջ մեծ շոգենաւերը չհնողները։ Չկայ մեծ դիւտ մը որ իսկոյն կատարելագործուի, բայց իւրաքանչիւր դար օգուտ կը քաղէ իրմէ առաջ անցող բոլոր դարուց գործերէն։ Փիւնիկեցւոց նաւերուն վրայ հետզհետէ քիչ քիչ զարգացում եղաւ մինչև որ պատրաստուեցան այս օրուան շոգենաւերուն ահագին տորմիղները։

«ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆ ՄԻ ԸՆԷՔ»

Աբևելեան պատմութիւն մը կայ թէ ինքնակալի մը գոռոզ մէկ սիրականը մինչ կ'անցնէր՝ քար մը նետեց աղքատ տերվիշի մը վրայ։ Տերվիշը չհամարձակեցաւ քարն առնուլ և նետել իրեն նետողին վրայ, վասն զի դիտեր որ այն մարդը շատ զօրաւոր էր։ Ուստի առաւ քարը և զգուշութեամբ դը-

բաւ իւր գրպանը, ըսելով ինքն իրեն. «Վրէժխնդրութեան ժամանակը կու գայ օր մը, և ես այն ատեն կը լուծեմ վրէժս։» Այնուհետեւ չատ չանցաւ, այս նոյն Տէրվիշը մինչ ժուռ կու գար քաղաքին մէջ, տեսաւ որ դէպ իւր կողմը կը մօտենար մեծ բազմութիւն մը։ Արտորալով գնաց տեսնել թէ ինչ կար, և ահա իմացաւ, ի մեծ զարմացումն իւր, որ իւր Թշնամին, ինքնակալին սիրականը, որ ինկած էր Թագաւորին աչքէն, ուղտի մը վրայ հեծցուցած կը պըտըտցունէին ի տես հասարակութեան, որպէս զի նշաւակ ըլլար ժողովրդեան ծաղուն և կատակներուն։ Տէրվիշն արտորնօք ձեռքն առաւ քարը զոր կը կրէր իւր գրպանը, ըսելով ինքն իրեն. «Ահա հիմա եկած է իմ վրէժխնդրութեանս ժամանակը, և պիտի հատուցանեմ անոր իւր դէպ յիս չար վարմանց փոխարէն։» Բայց վայրկեան մը մտածելէ ետքը, քարը նետեց մէկդի, ըսելով, «Վրէժխնդրութեան ժամանակը բնաւ չգար, վասն զի եթէ մեր Թշնամին զօրաւոր է, վրէժխնդրութիւնը ինչպէս յիմարական՝ նոյնպէս և վտանգաւոր է, և եթէ տակաւ է և թշուառ՝ յայնժամ վրէժխնդրութիւնն է յիմարութենէն աւելի գէշ. նուաստ է և անգութ։ Եւ ամէն պարագայից մէջ արգելուած է և չար։»

ՄԵՆ ՄՐՋՆԱԿԵՐԸ

Բնութեան մէջ զարմանալի բաներէն մին այս է որ չատ կենդանիներ կ'ապրին ուրիշ կենդանիներ ուտելով։ Կան փոքրիկ միջատներ, ինչպէս լուն, մլուկը, ոջիլը և ժժեղը, որ կ'ապրին իրենցմէ մեծ կենդանիներէ ծծանելով բայց ոչ թէ մեծ ջնաս տալով անոնց։ Կան նաև աւելի մեծ կենդանիներ որ կը կերակրուին իրենցմէ փոքր կամ տկար կենդանիներ ուտելով, զորս կեանքէ կը զրկեն որպէս զի իրենց կեանքը պահեն։ Բայց անոնցմէ քիչեր կան որ այժ և հասարձակութիւն ունին մարդու վրայ յարձակելու, և անոնցմէ ոմանք են մարդուս անդին ծառաները։ Մենք ամէնքս ալ պիտենք թէ ինչպէս օգտակար են կատուները որ առնէ կը զրկեն մուկեր և մուկեր կը սպաննեն, նաև քանի մը տեսակ թռչուններ, որոց ուտեստն են միջատներ որ կ'ուտեն հունձքերը։ Բայց պատկերին մէջ կը ցուցուի ուրիշ մը զոր գիտեմ թէ մեր ընթերցողներէն ոչ ոք տեսած է։

Այրեցած գետնի տակ գտնուող երկիրներուն մէջ մրջիւնք չատ աւելի մեծ են և թուով աւելի չատ՝ քան որչափ Թուրքիոյ մրջիւնները, և անչուչա պա-

ՄԵՆ ՄՐՋՆԱԿԵՐԸ

տակերն է զոր կը տեսնէք հոս։ Ամբողջ մարմինը բայց ի գլխէն, ծածկըւած է երկայն և հատ մազերով, և ունի երկայն և թատամած պոչ մը։ Ականջները և աչքերը չատ մանր են, և իւր գլուխը երկայն ձևով է և սրածայր կը վերջանայ փոքրիկ բերնով մը որ չունի ակռայ։ Ունի երկայն և գլանաձև լեզու մը զոր դուրս կը հանէ և որ կ'երևի կարմիր ճճիի նման,

դալարելով այս և այն կողմը իբր թէ ինք իրմէ զատ կեանք ունի։ Երբ կը մղէ զայն մրջնոց բոյնի մը մէջ, մրջիւնք կը խռնին անոր բոլորտիքը, և կը փակչին անոր վրայ, վասն զի կպչուն է սոսընձի նման, և մրջնակերը արագ մը իւր բերանը կը տանի զայն։ Ցետոյ դարձեալ կը մղէ հոն ուրիշներ ալ որսալու համար։

Ա֊յս կենդանիին առջևի ոտքերը ունին շատ սուր ճիրաններ, որոցմով կը փորէ մրջնոց բոյնը, և քալած ժամանակը կը ծալլէ կ'ամբիւխէ ճիրանները, դանոնք սուր պահելու համար, և կը կոխէ ոտքերուն դարսի կողմերուն վրայ։

Մրջնակերը թէպէտ չունի ակռայ, բայց չվախնար միւս կենդանիներէն։ Առջևի ոտքերը ունին շատ զօրաւոր մկաններ, և երբ ուրիշ կենդանի մը յարձակի վրան, կը բռնէ զայն իւր ճիրաններով, և սեղմելով կը սպաննէ։ Մեծ մրջնակերի մը առջողջ երկայնութիւնն է իւր դոշակին (քրթին) ծայրէն մինչև պոչին ծայրը՝ 7 կամ 8 ոտք։

ՓՈԽԱՐԻՆԸ ԸՆԴՈՒՆԵ՞Ց

Քանի մը տարի առաջ ամերիկան գեղեցիկ առասօտ մը սիրուն դէմքով երկու տղայք ժուռ կու գային Շըւեաի հարաւային ծովեզերքով։ Այս մօտ ընդարձակ նշանաւոր պանդոկի մը դէմ եղող քարափին վրայ։ Ցանկարծ անոնցմէ մին կեցաւ, և շուտ մը ծռելով առաւ աւազին մէջէն գեղեցիկ դնդասեղ մը մահիկաձև (նոր լուսնի ձևով) որոյ վրայ չքեղ ադամանդներ կային։ Ձեռքն առնելով՝ վեր բարձրացուցած աղաղակեց, «Ո՛հ, Քարլ, նայէ ի՛նչ գտայ։» «Ի՞նչ կ'ըսես, Ոլթոն,» ըսաւ ընկերը, «ատոնք ադամանդ են, տա՛ րակոյս չունիմ, վասն զի չկայ բան մը որ ատոնց չափ փայլի։ Եւ դուն հիմա հարուստ չե՞ս. դուն երբ որ ուզես կրնաս շատ ստակ ձեռք բերել քանի որ այդպիսի դնդասեղ մը ունիս։» «Ի՞նչ կ'ըսես, Քարլ,» ըսաւ Ոլթոն յանդիմանելու ձևով, «ի՞նչ ըսել կ'ուզես ատով. այս դնդասեղն իմս չէ։ Տարակոյս չունիմ թէ այս է պանդոկին մէջ դտնուող մեծատուն տիկնանց մէկուն, և ես պիտի չանամ դտնելտէրը։» «Պարապ խօսք. քեզի վարձ մը պիտի չտայ այն։ Թերևս «չըՆորհակալ եմ» մը անգամ պիտի չըսէ քեզի՝ կրած աշխատութեանդ փոխարէն, և յետոյ պիտի զղջաս որ յիմարի պէս գացիր անոր տուիր դնդասեղը։» «Անշուշտ բաւական վարձատրութիւն է ինձ եթէ խիղճս գովէ զիս թէ աղէկ ըրի,» ըսաւ Ոլթոն, «մինչև անգամ եթէ չնորհակալութիւն մը չլսեմ ինձ ըրածիս փոխարէն։»

Ոլթոն իսկոյն դնաց պանդոկը, և հոն ըսաւ թէ ինչ գտած էր, և պանդոկապետին ձեռքին մէջ դրաւ այն մահիկաձև դնդասեղը։ «Ա՛զնիւ պատանի, ազնիւ պատանի,» գոչեց պանդոկապետը։ «Ա՛յո, տղաս, այս դնդասեղը կորսնցուցող տիկինը հոս այս յարկին ներքև կը գտնուի։ Կեցիր հոս, մինչև որ իմացունեմ անոր. դիտեմ որ պիտի ուզէ տեսնել քեզ։»

Պանդոկապետը չուտով եա դարձաւ և տարաւ տղան ճոխապէս զարդարուած սրահ մը, ուր վառարանի տիկին մը կը սպասէր տեսնել զինա։ «Շնորհակալ եմ քենէ, տղեկ,» ըսաւ տիկինը, «ինձ դարձունելուդ համար այս դնդասեղը շատ կը սիրեմ։ Ինձ ըսած են թէ հայրդ մեռած է, բայց մայրդ տակաւին ողջ է, և թէ քու բոլոր կարողութեամբդ կ'աշխատիս օգնել անոր։ Գնա անոր, և ըսէ թէ ես կ'ըսեմ որ ինքն իրաւունք ունի պարծելու քեզի նման զաւակի մը մայր ըլլալուն համար։ Եւ չուտով պիտի վարձատրուիս չնորհակալութիւնս ներէ աւելի աղէկ բանովմը, վասն զի Շուեաի թագուհին բնաւ չէ ապերախտ։»

Տղան երկիւղով բռնուած՝ տեսնելով որ կը գտնուէր թագուհւոյն առջև, շուարեցաւ մնաց և կարող չեղաւ պատասխան մը տալ, այլ միայն հաղիւ ընել խոնարհութիւն մը և ելլել սենեակէն դուրս։

Ա֊յս դէպքէն քանի մը օր ետքը թագուհին և իւր ծառաները դարձան Սթոքհոլմ, Շուեաի մայրաքաղաքը, և անկէ չաբաթ մը ետքը հրաւէր եկաւ թագաւորէն որ Ոլթոն և նորա մայրը երթան յիշեալ քաղաքը։ Իսկոյն ճամբայ ելան անոնք, և երբ հոն հասան, դատն իրենց բնակութեան համար պատրաստուած տնակ մը, և թագաւորին պատգամաւորն ըսաւ թէ այն տնակն անոնց բնակարանը պիտի ըլլար այնուհետև։ Ցաջորդ օրը պալատականչուեցան, և ներկայացուեցան թագաւորին, որ խնամալով թէ Ոլթոն փափաք ունէր երաժիշտ ըլլալու, ըսաւ թէ պէտք է որ անմիջապէս սկսի իւր ուսմանց՝ կարող ուսուցչէ մը դաս առնելով։ Տասը տարի յետոյ այս տղան եղաւ Սըը Ոլթոն, երաժշտութեան ուսուցիչ արքունի ընտանեաց, և տէր հարստութեան և համբաւոյ։

Բայց պիտի ըսէք թերևս, «Ոլթոն՝ թագաւո՛ր մը ունէր իւր աղնիւ գործին համար վարձատրութիւն ընող։» Դուք միթէ չունի՞ք թագաւոր մը — թագաւորաց թագաւորը, որ վարձատրէ դձեզ ձեր ամէն մէկ աղնիւ գործին համար՝ թէ՛ մեծ թէ՛ պզտիկ։ Վստահ եղիք որ եթէ ընէք ինչ որ ուղիղ է, պիտի ընդունիք անոր վարձքը։

ՊԱՊԻՆ ՊԱՂԱՏԸ ՅԱՎԻՆԵՈՆ

ԱՎԻՆԵՈՆ

Մենք կաթոլիկ եկեղեցւոյ կ'ըսենք Հռոմայ եկեղեցի, բայց եղաւ ժամանակ, իբր 70 տարի, երբ Պապը կը բնակէր ուրիշ տեղ։ Ան գետոյ եղեբայց վրայ չվերուած է Աւինեոն, գաղիական քաղաքը, ուր եղաւ «Սուրբ Աթոռին Բաբիլոնեան գերութիւնը,» որպէս կը կոչեն կաթոլիկ մատենագիրք, բայց և այնպէս այն չէր գերութիւն, ինչպէս հիմա չէ այժմու Պապին վիճակը։ 1305 ին Պապ ընտրուեցաւ Պերդոան, Գաղիացի արքեպիսկոպոսը, և կարդինալաց չատերն էին

Գաղիացի. ուստի յօժարութեամբ ընդունելեցաւ Գաղիոյ Թագաւորին, փիլիպպոս Գեղեցկի, հրաւէրը, փոխադրել ի Գաղիա կաթոլիկ աշխարհին հոգևոր մայրաքաղաքը, և չինել երկրորդ վատիկան մը յԱվինեոն։ Պապն ըլլալով ամբաւ հարստութեան տէր, գնեց քաղաքը կոմսուհիէ մը որոյ ստացուածքն էր այն, և 1309է մինչև 1377՝ Պապերը նստան հոն։ Գրիգորիոս Պապ իւր վերջին տարին աթոռը փոխադրեց Հռոմ ուր մեռաւ քանի մը ամիս ետքը, և այնուհետև 50 տարի կային երկու իրարու հակառակ Պապեր, մէկը Հռոմ և միւսը Ավինեոն։

Պապական հին պալատը որ կը տեսնուի պատկերին մէջ, աղէկ պահուած է, բայց աւելի կը նմանի ամրոցի քան թէ պալատի։ Հիմա կը գործածուի իբրև զօրանոց և բանտ։ կը ծնան տակաւին նաև քաղաքին հին պարիսպները։ Այս վաղեմի շէնքերուն քով Ռոն գետոյն վրայ կը տեսնուի գեղեցիկ կամուրջ մը, որ չինուեցաւ ասկէ 40 տարի առաջ։ Քաղաքը ծնայ իբրև յոտուկ ստացուածք Պապերուն մինչև ասկէ 100 տարի առաջ պատահած յեղափոխութիւնը։

ՎԵ՛Ր ՆԱՅԷ

Երբեմն աղէկ է նայիլ ներս, տեսնելու համար թէ մենք ինչպէս մեղսալից ենք և կարօտ, աղէկ է նայիլ դուրս, տեսնելու համար թէ մեզի ամենուս համար որչափ գործ կայ ընելիք, բայց ասոնց ամենէն աղէկն է նայիլ վեր։ Թերևս մենք չափէն աւելի կը նայինք ներս և վար, բայց կարելի չէ մեզի շատ նայիլ վեր։ Նաւաստին երբ կայմի պարաններէն վեր կ'ելլէ՝ վեր կը նայի։ Գիտէ թէ վտանգաւոր է վար նայիլ բայց ապահով է նայիլ վեր։ Նայելով վար ալեկոծեալ ջուրերուն վրայ, թերևս դառնայ գլուխը, կորնչուինէ իւր հաւասարակշռութիւնը և գլորի վար։ Անգամ մը նաւապետ մը իւր տղան հետ առաւ երբ ծովային ճանապարհորդութիւն պիտի ընէր։ Օր մը տղան նաւուն կայմերուն վերի ծայրն ելաւ։ Երբ բարձրը կը գտնուէր ծովէն վեր՝ վար նայեցաւ և գլուխը դարձաւ։ Իսկոյն օդնութիւն աղաղակեց։ Հայրը տեսնելով անոր վտանգը, պոռաց անոր՝ ըսելով որ վեր նայի։ Տղան վեր նայեցաւ և ազատուեցաւ վար իյնալէ։ "Քեզի կը բարձրացընեմ իմ աչքերս, ո՛վ երկնից մէջ բնակող," կ'ըսէ Իսրայելի քաղցր Սաղմոսներ երգողը։ Ինչո՞ւ համար պէտք է մեզի վեր նայիլ։ Վասն զի Աստուած վերն է։ Վասն զի մեր երկնաւոր Հայրը վար կը նայի։ Վասն զի երկնից փառքը դէպ ի վեր կը քաշէ զմեզ։ Վասն զի մեր փրկիչը վերը երկինքն է, և հոն են նաև շատեր որ շատ սիրելի են մեզի, որք կը սպասեն մեզի և կը նային մեր վրայ։ Ուստի մենք պարտիմք մեր բոլոր կենաց մէջ նայիլ վեր։

Կը ճանչնայի տղայ մը որ միշտ վար կը նայէր։ Աչքը գետինը կ'ուղղէր երբ կը քալէր, միայն խորհելով թէ ինչ կրնար գտնել գետնէն։ Օր մը գտաւ քառորդ մէճիտ մը, ուրիշ օր մը՝ դեղեցիկ ոսկեզօծ դնդասեղ մը։ Ո՛րչափ աւելի որ բան կը գտնէր գետնէն, այնչափ աւելի կը նայէր գետինը։ Այն տղան աչուըները աշխարհիս վրայ սևեռած էր իւր բոլոր կենաց մէջ, Քրիստիանոսին ճամբորդութեան գիրքին մէջ ներկայացուած մարդուն նման, որ խելքը միտքը տուած էր իւր ձեռքի քերոցով հաւաքել փայտի կտորներ, խեղդ և յարդ և երկրիս անարժէք և անոտի բաները, մոռնալով նայիլ վեր դէպ ի փրկիչը որ իւր քովը կը կայնի և կը մատուցանէ անոր թագ և թագաւորութիւն։ Զիշեալ տղան այնչափ կը նայէր վար որ փափաք ունեցած չէր նայիլ Քրիստոսի և դէպ երկինք։ Շատ տակ հաւաքած էր վար նայելով և ժողվելով, բայց շատ չըներ, Աստուծոյ նախախնամութեամբ կորնչուց գրեթէ իւր բոլոր ստացածը. և կ'աղօթեմ եռանդով որ հիմա սկսի նայիլ վեր։ Կը ճանչնամ ուրիշ տղայ մը (հիմա յիշուածին եղբայրը) որ իրեն սովորութիւն ըրած էր վեր նայիլ։ Կը նայէր վեր՝ ծառերուն, բլուրներուն, թռչուններուն, ամպերուն, երկինքին, արևուն, աստղերուն որ երմէ վեր են, և կը խորհէր զանոնք ամենն ստեղծող Աստուծոյ վրայ։ Կը նայէր վեր՝ Քրիստոսի, և գտաւ հանդիստ, ուրախութիւն և զօրութիւն, և այս տղան այսօր է Աւետարանի պաշտօնեայ մը, և կ'երթայ յաոաջ նայելով վեր։

Մեծ տարբերութիւն կայ վար նայելուն և վեր նայելուն մէջտեղ։ Վար նայելը մեզ կ'ընէ աչխարհասէր և անձնապաշտ միայն։ Վեր նայելը՝ կ'ընէ մեզ սուրբ և զօրաւոր։ Աղէկ է մեզի համար յիշել միշտ թէ Աստուած միշտ կը նայի վար։ Կը տեսնէ մեզ թէ՛ մութի և թէ՛ լուսոյ մէջ, թէ՛ առանձին ըլլանք՝ թէ՛ բազմութեան մէջ, թէ՛ տունը՝ թէ՛ դուրսը։ Երեկոյ մը հայր մը իւր տղան հետ առնելով գնաց ցորենի արտ մը այն նպատակաւ որ գողնար տոպրակ մը ցորեն։ Զգուշութեամբ նայեցաւ ամէն կողմ որպէս զի վտահ ըլլար թէ ոչ ոք կը տեսնէր զինա։ Երբ իւր տոպրակը լեցուեցաւ մօտ էր, իւր տղան որ կիրակնօրեայ դպրոցի աշակերտ էր, ըսաւ, "կեցիր հայր. մոռցար տեղ մըն ալ նայիլ։" "Ո՞ր", հարցուց հայրը։ "Մոռցար նայիլ վեր։" Մարդն աճապարանօք պարպեց տոպրակը և գնաց տուն, խորհրդածելով իւր մտաց վրայ "Մոռցար նայիլ վեր," խօսքը։ Աբրահամ, Իսահակ, Յակոբ, Մովսէս, Դաւիթ, Եղիա, առաքեալք, մարտիրոսք և ամէն դարու բարիները երկինքն են, վասն զի կը նայէին վեր։ Այն տղան կամ աղջիկը որ կ'աղօթէ, որ կը կարդայ Աստուծոյ խօսքը, որ Աստուծոյ տունը և կիրակնօրեայ դպրոց կ'երթայ, և կ'ապաւինի Քրիստոսի և կը ջանայ նմանիլ անոր և օրհնութիւն ընդունելու, վեր կը նայի և կ'ելլէ վեր։

ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՆԵԼՈՒԿԻ

Յունիս ամսոյ հանելուկին պատասխանն են հետագայ բառերը կարգաւ.

Աբիսուա, Աբրամ, Իմ, Բարաքիա, Աբիաթար, Փողտոր, Բաալզեպ, Մեսոբեմ։

Լուծեցին· Պարտիզակ, — Աբշակ Տ· Սահակեան, Կարապետ Զ· Ատաբեան, Լևոն Յ· Թորոսեան։

ՀԱՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻՆ

ՍՈՂՈՄՈՆԻ ՄԷԿ ԱՌԱԿը

—o—

Ես կը բաղկանամ 65 գիրերէ

Իմ 1. 2. 62. 13. 26. 17. 15. 56. 61. 35. են մարգարէի մը երկրորդ անունը։

Իմ 5. 14. 12. 16. 19. 52. են քահանայ մը։

Իմ 48. 37. 38. 62. 46. 57. են գործի մը որ սորգաց։

Իմ 11. 55. 54. 39. 49. 40. են ծաղիկ մը։

Իմ 21. 26. 3. 65. են Յովնաթանու թոռնորդոց մին։

Իմ 6. 49. 50. 15. 32. են Դաւիթի որդւոց մին։

Իմ 1. 61. 42. 15. 44. 30. 49. են մարգարէի մը հայրը։

Իմ 57. 4. 64. 22. 47. 7. 23. են Հռովմայեցի Ճարտասան մը։

Իմ 9. 30. 25. 19. 20. 24. են Աստբեատանի մայրաքաղաքաց մին։

Իմ 50. 28. 64. 53. 8. 51. են Յուդայի քաղաքաց մին։

Իմ 18. 36. 35. են պատուոյ բառ մը։

Իմ 63. 29. 5. են Եդովմի իշխանաց մին։

Իմ 17. 26. 27. 41. 38. 62. են Իսրայելի թագաւորաց մին։

Իմ 34. 33. 61. 29. 58. 5. են Սուրբ Գրոց մէջ յիշուած օտար երկիր մը։

Իմ 60. 49. 43. 12. 21. են Եսաւի թոռանց մին։

Իմ 59. 16. են Յուդայի որդւոց մին։

Իմ 10. 31. 45. են ը. ը. ը. գիրերը։

Մալաթիա ՌՈՒԲԻՆ Յ· ՈՐԲԵՐԵԱՆ

Ամերիկայի Միսիոնարաց ընկերութեան հողին,
Արտօնատէր Հ· Ֆ· ԿՐԻՆ
Տնօրէն—Խմբագիր Հ· Ս· ՊԱՐՆԸՄ
Ֆինանսական հոգատար Աժդերեան Խան։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա· ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ